Ոչ զատեցին՝ ոչ մին թողին
Ոչ Յովնաթան՝ ընդ Սաուղին,
Այլ Թադէոս ընդ Անտոնին
Մին ոսկերիչ էր առաջին

Միսն ի հարանց՝ սուրբ դազարին
Մխիթարայ՝ Վարդապետին.
Յամենայնի՝ գովեալ էին,
Լուսին արև ընտիր էին.
Եմ երկոքեան՝ մի առօրին
Անզաւակիլ՝ մօրըն ցուցին.
Հարան ի սուր՝ ժանտախտ մահին
Անկան ի լերինս՝ օրթագիւղին։

Սէտէֆճի Գրիգորի որդւոյ Հ. Թադէոս Վարդապետ Մխիթարեան, որ ննջեաց ի Քրիստոս յամի տեառն 1767, յամսեանն սեպտ.ի քառասուն և երկու յամի իւրոյ հասակի։

ՄՀԳ.

Կարնոյ և Նորշէնի Հայ ժողովրդին թշնամի զօրքերէ կրած տառապանքներուն մէկ փոքրիկ տեղեկութիւնն է։

Թուղթիս հասցէն է առ «Տարօնացի Հ. Պօղոս ևն»։

Գերապայծառ և. Գերյարգելի Տեառնդ Տեառնդ Ստեփաննոս Աբբայ հօրդ մերում և համայն հարց՝ և սրբակենցաղ (այդր եղերոց) կրօնաւորացդ և.ն. և.ն.

... ի յամի Տեառն 1766 խնուսայ փաշայն և Կարնոյ քաղաքի փաշայի քէհայն՝ բազում զօրօք ի յամսեանն փէտրուարի ի ներ բազմութեան ձեանց՝ շրջապատեցին զերկիրն մեր, և յաւար հարին զամենայն գիւղօրայսն, և մերկացուցին յամենայն ընչից. և զմեզ համայն Նորշէնու եղեալ ժողովրդովք մերկացուցին իբրև զմեր[կ] ի մօրէ ծնեալ՝ ի չեխկանց բլուրն. և մեզի ձեռք մի զգեստ տարին, և զայլսն լռեմ, քանզի ձանձրութիւն է Հրամանուցդ. և մեր մերկացեալ յամենայն ընչից գնացաք ի մուշ. և Դ. ամիս ևս իբրու ի բանտի մնացաք ի մուշ շրջապատեալ զմեզ զօրքն նոցա. և զկնի այս քանից անցից, Լէզկու փաշայն սպանաւ ի զօրաց մերոց, և դարձեալ ի բազմանալ զօրաց նոցին՝ զքաղաքն ևս առին, և բազում չարիս հասուցին մեզ. և յետոյ Աստուծով զերձեալ յայսմ վտանգէս՝ կրկին դարձաք ի Նորշէն, և մինչև յայսմ գարնանս մնացաք՝ և սակս հարկապահանջութեան ոչ կարացաք տևել, ելեալ եկայք Խրուլլու համայն տամբք մերովք. և յօղունցիք հանդերձ տէր յարութիւնիւ գնացին ի յալաշկերտ. և ձեր գիւղի կէսն այլ, և Նորշէնու կէսն գնացին ի յալաշկերտ...։

Յամի Տեառն 1767 Հոկտ.ի [գրեալ] [Վարդան քահանայ]
Կարին
Յամի տեառն 1768 ի մայիսի 24 [ընկալեալ]